ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 18-Ա

<<12>> մայիսի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման կարգի>> 12-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2023-2024 թվականներին սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<12>> մայիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2023 թվականի
մայիսի 12-ի N 18-Ա որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2023-2024 թվականներին նախատեսված սուբվենցիոն ծրագրերի

Հ/հ	Ծրագրի անվանումը	Համայնքի շահառու հանդիսացող բնակավայրերը	Իրականացվելիք աշխատանքների հակիրճ նկարագրությունը
1.	ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Մաշտոցի, Շիրակացի, Կոլտնտեսականների, Հրանտ Շահինյան, Ձորակապի 2-րդ, Իսահակյանի 3-րդ փողոցների կոյուղատարի կառուցում:	Քաղաք Մարալիկ գյուղական բնակավայրեր՝ Ձորակապ, Իսահակյան	Ծրագրով նախատեսվում է անցկացնել Մարալիկ քաղաքի Մաշտոցի փոցող՝ 850մ երկարությամբ, Շիրակացի փողոց՝ 1050մ երկարությամբ, 1-ին թաղամասի 9-րդ և 10-րդ փողոցներ՝ 500մ, Ձորակապ բնակավայրի 2-րդ փողոց՝ 300մ երկարությամբ և Իսահակյան բնակավայրի 3-րդ փողոց՝ 400մ երկարությամբ: Ընդամենը 3100մ երկարությամբ:
2.	ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի տեխնիկական վերազինում՝ էքսկավատոր-բեռնիչի, ավտոաշտարակի, աղբատար ավտոմեքենայի և ավտոբուսի ձեռքբերման միջոցով:	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի ներքին ենթագոտու 11 գյուղական բնակավայրերի սպասարկման համար /Աղին, Անիավան, Անիպեմզա, Բագրավան, Հայկաձոր, Ջրափի, Սարակապ, Իսահակյան, Լուսաղբյուր,Շիրակավան, Գուսանագյուղ,/ որից 8-ը ընդգրկված են սահմանամերձ բնակավայրերի ցանկում / Աղին, Անիպեմզա, Բագրավան, Հայկաձոր, Ջրափի, Իսահակյան, Լուսաղբյուր, Շիրակավան/:	Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել ամբողջական ժամանակակից պահանջներին բավարարող բազմաֆունկցիոնալ մեքենաներ՝ մեկ միավոր հատուկ տեխնիկա /JSB-3cx (4cx)/, մեկ միավոր աղբատար մեքենա GAZ KO-440N, մեկ ավտոաշտարակ (տելեսկոպ):
3.	ՀՀ Շիրակի Անի համայնքի Մարալիկ քաղաքի 4 և Անիպեմզա բնակավայրի 3 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ:	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Մարալիկ քաղաքում և Անիպեմզա բնակավայրում:	Ծրագրով նախատեսվում է Մարալիկ քաղաքի II թաղամասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ բազմաբնակարան շենքերի և Անիպեմզա բնակավայրերի 1-ին փողոցի 32-րդ, 28-րդ, 19-րդ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում, Անիպեմզա բնակավայրում թվով 3 բազմաբնակարան շենքի 460 քառակուսի մետր և Մարալիկ բնակավայրում թիվ 4 բազմաբնակարան շենքի 3000 քառակուսի մետր վերակառուցման աշխատանքներ:

			Ընդհանուր 3460 քառակուսի մետր մակերեսով:
4.	ՀՀ Շիրակի Անի համայնքի Սառնաղբյուր, Սարակապ և Հայկաձոր բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատում:	Անի համայնքի Սառնաղբյուր, Սարակապ և Հայկաձոր բնակավայրեր	Ծրագրով նախատեսվում է Անի համայնքում հիմնանորոգել 3 բնակավայրերի փողոցներ, մասնավորապես. Սառնաղբյուր համայնք տանող ճանապարհ մինչև Կարմիր վանքի հատված՝ 1300 մ, Սարակապ համայնք տանող ճանապարհ՝ 1500մ, Հայկաձոր համայնք տանող ճանապարհ՝ 1500մ: Ընդամենը 4300 մ:
5.	ՀՀ Շիրակի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոցի /առաջին, երկրորդ հատվածների/, Երիտասարդական փողոցի, Շիրակավան բնակավայր մտնող ճանապարհների հիմնանորոգում:	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Մարալիկ քաղաքում և Շիրակավան բնակավայրում:	Ծրագրով նախատեսվում է Անի համայնքում Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոցի առաջին և երկրորդ հատվածներում իրականացնել համապատասխանաբար 620 և 403 գծ. մետր /ընդամենը՝ 1023 գծ. մետր, Երիտասարդական փողոցի 762 գծ. մետր, իսկ Շիրակավան բնակավայրում՝ 461 գծ. մետր երկարության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:
6.	ՀՀ Շիրակի Անի համայնքի Մարալիկ քաղաքի ֆուտբոլի մարզադաշտի հիմնանորոգում:	Անի համայնքի Մարալիկ քաղաք և գյուղական 17 բնակավայրեր:	Ծրագրով նախատեսվում է Մարզադաշտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգում. ցանկապատի արդիականացում, տրիբունայի տանիքի կառուցում, ջրամատակարարման, ոռոգման համակարգի, ջրահեռացման համակարգերի վերականգնում, ջեռուցման համակարգի անցկացում, դաշտի հարթեցում, մշակում:

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ